սը, ռուսիաբնակ հայոց թեմական առաջնորդ Ցովսէփ արքեպիսկոպոսն և Կեսարիայի թեմական առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսը։ Սակայն 16 յունուարի 1800 ամի կայացած այդ ժողովի համախօսականի մէջ երկու վերջին ընտրելիների անունը չկայ, իսկ Դանիէլից յետոյ երկրորդ կանդիտատ անուանուած է Եփրեմ արքեպիսկոպոսը և ահա այդ համախօսականը տանելու համար Դաւիթ արքեպիսկոպոսը Կ. Պոլիս առաքուեցաւ։ Թէպէտ ընտրողական ժողովն և կրցանկար քանքարաւոր և հաստատակամ Ցովսէփին կաթողիկոս տեսնել, սակայն վախենալով մահմեդական իշխանների վրէժխնդրութիւնից այն մասնակցութեան փոխարէն, որ նա ունեցել էր ռուսաց զօրքերի արշաւանքում թիւրքերի և պարսիկների դէմ, զգուշացաւ պաշտօնապէս նրան ընտրելի հրատարակել։

Դաւիթ եպիսկոպոսի Պոլիս մեկնելուց մի քանի օր յետոյ Էջմիածին եկան Առաքել աւագ քահանայ Ղամազեանն և Ցովսէփ Բեհբութեան իշխանը, մի նամակ բերելով վրաց Գէորգ թագաւորից և մի հանրագիր Թիֆլիսի հայ հասարակութիւնից, որոնց մէջ յիշատակւում էին Ցովսէփ արքեպիսկոպոսի ծառայութիւններն և առաջարկւում՝ նրան ընտրել կաթողիկոս։ Այս պատճառով ընտրողական ժողովը մի նոր նիստ գումարեց և մի նոր համախօսական կազմելով, թէ կաթողիկոս ընտրուեն Պոլսի պատրիարք Դանիէլ արքեպիսկոպոսն և ռուսիաբնակ հայոց վիճակի առաջնորդ Ցովսէփ արքեպիսկոպոսը, այդ արձանագրութիւնը դեռ Կարին գտնուող Դաւիթ արքեպիսկոպոսին ուղարկեց, որպէս զի առաջնի հետ միաժամանակ Կ. Պոլսի հայոց համայնքին յանձնուի։ Բացի այդ՝ հայ ազգի ընտրողները, Թիֆլիսի պատգամաւորների պահանջմամբ, մի հրաւիրագիր յօրինեցին յանուն Ցովսէփ արքեպիսկոպոսի, որ Գէորգ թագաւորը պիտի հասցնէր նրան։ Այդ հրաւիրագրում, ի միջի այլոց, հետեւեալ տողերը կան. «Եթէ դու չես վախենում այն աղէտներից, որոնք կարող են հասնել ազգին, սուրբ Աթոռին և քեզ, ուրեմն հաճիր գալ մեզ մօտ—մենք վայելուչ մեծարանքով կընդունենք քեզ. սակայն եթէ վախենաս և չգաս, մենք քեզ մեղադիր չենք լինիլ»։

Ինքն Ցովսէփ արքեպիսկոպոսն իւր ընտրութիւնն իսկապէս կայացած էր համարում։ Վրաց թագաւորի համակրութիւնը նրա ընտրութեան, նոյնպէս և ռուսաց կառավարութեան աջակցութիւնը, որ անշուշտ պէտք եղած դէպքում կըհասնէր

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան